

Արձանագրություն 2

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ ԲԸ-ԾՁԲ-01/17» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան

«1» հունիս 2017թ.

Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Դ. Համբարձումյան – ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության պետ

Անդամներ

Վ. Մահտեսյան – ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական ներքին ֆինանսական հսկողության և պետական գնումների մեթոդաբանության վարչության գնումների գործընթացի կարգավորման և համակարգման բաժնի պետ

Վ. Արշակյան – ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային գործընթացի կառավարման վարչության կապիտալ ծախսերի ֆինանսական ծրագրավորման բաժնի պետ

Գ. Վարդանյան – ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման, զարգացման և վիճակագրության վարչության պետի տեղակալ

Ա. Ղազարյան – ՀՀ ՖՆ ԳԿՎ տնտեսագետ

Մ. Շիրյան – ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային գործընթացի կառավարման վարչության պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերի ֆինանսական ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ

Հ. Կամենդատյան – ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության կրթության, գիտության, հանգստի և մշակույթի ոլորտներում բյուջետային ընթացիկ ծախսերի ֆինանսական ծրագրավորման բաժնի պետ

Նիստին ներկա չէին՝

Ժ. Տիտիզյան – ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչության պետ

Փ. Քալաջյան – ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման, զարգացման և վիճակագրության վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների պատասխանատու

Գնումները համակարգող

Ա. Մարտիրոսյան՝ ԳԿՎ սպասարկման բաժնի առաջատար մասնագետ

1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հայտարարության և հրավերի հրապարակվելու օրվանից հաշված 41-րդ օրվա ժամը 11:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -7, դեմ – 0:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

Հայտեր ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

1	«ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ	Ք. Երևան, Տպագրիչներ 13 շենք, բն. 61
2	«ԼՍՈՖՏ» ՍՊԸ	Ք. Երևան, Շիրազի 40 շենք, բն. 14
3	ՀՀ-ում Սիներգի Ինթերնեշնլ Սիսթեմզ ԲԸ մասնաճյուղ	Ք. Երևան, Արմենակ Արմենակյան 2/5 շենք
4	«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ	Ք. Երևան, Ն. Ադոնցի 2, 2-րդ մուտք, 2-րդ հարկ
5	«ԱՎՌՈՄԻԿ» ՍՊԸ և ԱԶ Միքայել Ավագյան	Ք. Երևան, Դրոյի 12 շենք, բն. 40 Ք. Երևան, Սիգրան Մեծի 10 շենք, բն. 4

Ընդունվել է որոշում՝ կողմ - 7, դեմ - 0:

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

Հանձնաժողովը որոշեց մերժել ներքոհիշյալ կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերը հետևյալ հիմանվորմամբ.

1	ՀՀ-ում Սիներգի Ինթերնեշնլ Սիսթեմզ ԲԸ մասնաճյուղ	Փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, գնի առաջարկում և տուժանքի մասին համաձայնագրում ու վճարման պահանջագրում մասնակցի անվանումները տարբերվում են, տուժանքի մասին համաձայնագրում առկա չէ համարը, վճարման պահանջագրում առկա է ամիս ամսաթիվ (այն լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս)
2	«Հելիքս Կոնսալտինգ » ՍՊԸ	Տուժանքի մասին համաձայնագրում առկա չէ համարը, վճարման պահանջագրում առկա չէ առժույթը (բառերով և կողով) տողի արժույթի կողը (պարտադիր լրացման դաշտ է)
3	«ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ	Հանձնաժողովը ընդունեց ի գիտություն , որ Տուժանքի մասին համաձայնագրում առկա չէ գլխավոր հաշվապահի ստորագրությունը (տեղեկանք առկա չէ), ֆինանսական միջոցների մասին հայտարարության համապատասխան հավելվածը բացակայում է
4	«ԱՎՌՈՄԻԿ» ՍՊԸ և ԱԶ Միքայել Ավագյան	Բացակայում է համատեղ գործունեության (կոնցորսիումի) պայմանագիրը, տուժանքի մասին համաձայնագրում առկա չէ գլխավոր հաշվապահի ստորագրությունը (տեղեկանք առկա չէ), տեխնիկական միջոցների մասին հայտարարությունը բացակայում է
5	«ԼՍՈՖՏ» ՍՊԸ	Տուժանքի մասին համաձայնագրում առկա է գլխավոր հաշվապահի ստորագրությունը, սակայն առկա չէ էլեկտրոնային թվային ստորագրությունը

Ընդունվել է որոշում՝ կողմ - 7, դեմ - 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

ՀՀ ՖՆ ԲԸ-ԾՁԲ-01/17 ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկած գները ներկայացվում են արձանագրությանը կից հավելված 1-ում
Ընդունվել է որոշում՝ կողմ -7, դեմ - 0:

Հանձնաժողովը որոշեց.


1. Հարցում կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն գլխավոր հաշվապահի ստորագրության (տեղեկանք առկա չէ) բացակայության և գլխավոր հաշվապահի էլեկտրոնային թվային ստորագրության բացակայության վերաբերյալ (գրությունը կցվում է):
2. Ծանուցել «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ին և «ԱՎՌՈՄԻԿ» ՍՊԸ-ին ու ԱԶ Միքայել Ավագյան-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել համապատասխանաբար՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության հավելվածը և համատեղ գործունեության (կոնցորսիումի) պայմանագիրն ու տեխնիկական միջոցների մասին հայտարարության հավելվածը:
Ընդունվել է որոշում՝ կողմ -7, դեմ - 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

ՀՀ ՖՆ ԲԸ-ԾՁԲ-01/17 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստ հրավիրել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պաշտոնական պարզաբանման տրամադրման հաջորդ օրը ժամը 10.30-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:


Ընդունվել է որոշում՝ կողմ -7, դեմ - 0:

Գնահատող հանձնաժողովի
նախագահ՝



Դ. Համբարձումյան

հանձնաժողովի անդամներ՝




Վ. Մահտեսյան

Վ. Արշակյան


Գ. Վարդանյան



Ա. Ղազարյան



Մ. Շիշյան



Հ. Կամենդատյան

Գնումները համակարգող՝



Ա. Մարտիրոսյան

Արձանագրություն 3
ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ ԲԸ-ԾՁԲ-01/17» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան

«6» հունիս 2017թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Դ. Համբարձումյան – ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության պետ

Անդամներ

Վ. Մահտեսյան – ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական ներքին ֆինանսական հսկողության և պետական գնումների մեթոդաբանության վարչության գնումների գործընթացի կարգավորման և համակարգման բաժնի պետ

Վ. Արշակյան – ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային գործընթացի կառավարման վարչության կապիտալ ծախսերի ֆինանսական ծրագրավորման բաժնի պետ

Գ. Վարդանյան – ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման, զարգացման և վիճակագրության վարչության պետի տեղակալ

Ա. Ղազարյան – ՀՀ ՖՆ ԳԿՎ տնտեսագետ

Հ. Կամենդատյան – ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության կրթության, գիտության, հանգստի և մշակույթի ոլորտներում բյուջետային ընթացիկ ծախսերի ֆինանսական ծրագրավորման բաժնի պետ

Նիստին ներկա չէին՝

Ժ. Տիտիզյան – ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչության պետ

Փ. Քալաջյան – ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման, զարգացման և վիճակագրության վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների պատասխանատու

Մ. Շիրյան – ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային գործընթացի կառավարման վարչության պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերի ֆինանսական ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ

Գնումները համակարգող

Ա. Մարտիրոսյան՝ ԳԿՎ սպասարկման բաժնի առաջատար մասնագետ

1. Տեղեկություններ ՀՀ ֆինանսների նախարարություն կատարված հարցման և հայտերում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ

1. ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանման համաձայն «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ի, «ԱՎՌՈՄԻԿ» ՍՊԸ-ի ու ԱԶ Միքայել Ավագյանի, «ԼՍՈՖՏ» ՍՊԸ-ի հայտերը ենթակա չեն մերժման (գրությունը կցվում է):

2. «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ն և «ԱՎՌՈՄԻԿ» ՍՊԸ-ն ու ԱԶ Միքայել Ավագյանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայարնել են համապատասխանաբար՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության հավելվածը և համատեղ գործունեության (կոնգրեսիումի)

Հանձնաժողովը որոշեց.

1. «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ի, «ԱՎՌՈՄԻԿ» ՍՊԸ-ի ու ԱԶ Միքայել Ավագյանի, «ԼՍՈՖՏ» ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանումը:
2. Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ին, 2-րդ տեղ՝ «ԱՎՌՈՄԻԿ» ՍՊԸ-ին և ԱԶ Միքայել Ավագյան-ին:
3. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:
4. Հարցում կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ի, «ԱՎՌՈՄԻԿ» ՍՊԸ-ի և ԱԶ Միքայել Ավագյանի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:


Ընդունվել է որոշում՝ կողմ -6, դեմ - 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

ՀՀ ՖՆ ԲԸ-ԾԶԲ-01/17 ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել հրավերի փաստաթղթերի ներկայացման և եզրակացության ներկայացման օրվանից հետո ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Աղամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -6, դեմ - 0:

Գնահատող հանձնաժողովի
նախագահ՝




Դ. Համբարձումյան


հանձնաժողովի անդամներ՝



Վ. Մահտեսյան



Վ. Արշակյան



Գ. Վարդանյան



Ա. Ղազարյան




Հ. Կամենդատյան



Գնումները համակարգող՝



Ա. Մարտիրոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, Երևան, Լևոնի Աղամյան փող. 1
Էլ. փոստ՝ headofstate@minfin.am

Հեռ.՝ +374 11 800 044
Վեբ կայք՝ www.minfin.am

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ԹԱՄԱԶՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թամազյան

Հիմք ընդունելով <Գնումների մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը՝ խնդրում ենք տրամադրել մեթոդական օժանդակություն և ներկայացնել պարզաբանում ներքոգրյալ հարցերի վերաբերյալ՝

Գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան մասնակիցը ներկայացրել է հայտ, որի բաղկացուցիչ մաս կազմող տուժանքի մասին համաձայնագրում՝

1. առկա չէ գլխավոր հաշվապահի ստորագրությունը, հայտում առկա չէ նաև տեղեկանք այն մասին, որ կազմակերպությունը չունի գլխավոր հաշվապահ,


2. առկա է գլխավոր հաշվապահի ստորագրությունը, սակայն առկա չէ էլեկտրոնային թվային ստորագրությունը:

Գնումների մասին ՀՀ օրենսդրության համապատասխան վերոգրյալ փաստաթուղթը շտկման ենթակա չէ և անհամապատասխանությունների դեպքում հայտը ենթակա է մերժման:

Նման դեպքում մասնակցի հայտը մերժման ենթակա է թե՞ ոչ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ք Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Լենին Եղանյան փող. 1

№

Ձեռ №

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԷՂԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գևորգյան

Ուսումնասիրելով Ձեր 02/06/2017թ. թիվ 1/18-1/[1155341]-17 գրությունը /այսուհետ՝
Գրություն/՝ հայտնում ենք հետևյալը.

1. Գրության 1-ին կետով բարձրացված հարցի վերաբերյալ.

<<Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 11-րդ
հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը
պատասխանատվություն է կրում հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական
ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում կազմակերպելու
համար:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ կազմակերպությունում
հաշվապահական հաշվառման ընդհանուր վարումը և ֆինանսական հաշվետվությունների
կազմումն իրականացնում է հաշվապահական ծառայության ղեկավարը, իսկ
հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով
հաշվապահական հաշվառումը վարելու դեպքում՝ այդ կազմակերպության լիազորած անձը
կամ Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված այլ անձը (այսուհետ՝ գլխավոր
հաշվապահ)՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի
պահանջներին համապատասխան: Ընդ որում Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի

համաձայն՝ հաշվապահական հաշվառման աշխատանքների ծավալից կախված՝ կազմակերպության ղեկավարն իրավունք ունի հաշվապահական հաշվառումը վարել՝

- կառուցվածքային ստորաբաժանում համարվող հաշվապահական ծառայության միջոցով,

- կազմակերպության աշխատակիցը համարվող հաշվապահի միջոցով,

- հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատերերի, իսկ կուսակցությունների, հասարակական և կրոնական կազմակերպությունների համար՝ նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց միջոցով,

- անձամբ:

Վերոգրյալով պայմանավորված և նկատի ունենալով, որ ՀՀ ֆինանսների նախարարի 02/08/2013թ. թիվ 667-Ա հրամանով հաստատված հրավերների օրինակելի ձևերին կից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի վավերապայմաններով սահմանված է ընկերության տնօրենի և գլխավոր հաշվապահի ստորագրության պահանջ, հայտնում ենք հետևյալը.

1. եթե կազմակերպությունում հաշվապահական հաշվառման ընդհանուր վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումն իրականացվում է հաշվապահական ծառայության կամ կազմակերպության աշխատակիցը համարվող հաշվապահի միջոցով, ապա տուժանքի մասին համաձայնագիրը գլխավոր հաշվապահի մասով պետք է էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվի համապատասխանաբար հաշվապահական ծառայության ղեկավարի կամ հաշվապահի կողմից, իսկ տնօրենի մասով՝ տնօրենի կողմից.

2. հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով հաշվապահական հաշվառումը վարելու դեպքում՝ տուժանքի մասին համաձայնագիրը գլխավոր հաշվապահի մասով պետք է էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվի այդ կազմակերպության լիազորված անձի կողմից, իսկ տնօրենի մասով՝ տնօրենի կողմից.

3. եթե հաշվապահական հաշվառումը վարվում է կազմակերպության ղեկավարի կողմից անձամբ, ապա տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվում է առանց գլխավոր հաշվապահի ստորագրության: Ընդ որում, եթե տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվել է միայն կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ,

ապա մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, նկատի ունենալով, որ տվյալ դեպքում հաշվապահական հաշվառումը վարվում է կազմակերպության ղեկավարի կողմից անձամբ:

Ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ Գրության 1-ին կետով նշված մասնակիցների հայտերը, նույն կետով նշված հիմքով, ենթակա չեն մերժման:

2. Գրության 2-րդ կետով բարձրացված հարցի վերաբերյալ.

Եթե մասնակիցը բովանդակային առումով կատարել է տուժանքի մասին համաձայնություն ներկայացնելու պահանջները, ապա գտնում ենք, որ նման իրավիճակում ձևական սխալների պատճառով հայտի անբավարար գնահատման համար հիմքեր առկա չեն:

Միաժամանակ հայտնում ենք, որ մասնակիցների ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



ԿԱՐԵՆ ԹԱՄԱԶՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ


Շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան

1 հունիս 2017թ.


ՀՀ ՖՆ ԲԸ-ԾՁԲ-01/17 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Դ. Համբարձումյանս, անդամներ՝ Վ. Մահտեսյանս, Վ. Արշակյանս, Գ. Վարդանյանս, Ա. Ղազարյանս, Մ. Ծիշյանս, Հ. Կամենդատյանս, քարտուղար՝ Ա. Մարտիրոսյանս նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Գնահատող հանձնաժողովի
նախագահ՝



Դ. Համբարձումյան

հանձնաժողովի անդամներ՝



Վ. Մահտեսյան

Վ. Արշակյան

Գ. Վարդանյան

Ա. Ղազարյան

Մ. Ծիշյան

Հ. Կամենդատյան

Գնումները համակարգող՝



Ա. Մարտիրոսյան